ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

N 9 29. 09. 2012թ.

## ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Նոր Կյուրին համայնքի 2012թ. 3-րդ եռամսյակի բյուջեի կատարողականը և առաջարկել համայնքի ղեկավարին ձեռնարկել միջոցառումներ համայնքի բյուջեի եկամտային մասն ապահովվելու ուղղությամբ, մասնավորապես ֆիզ. անձանց հողի հարկերի, ֆիզ անձանց գույքահարկի, հողերի վարձավճարների և տեղական տուրքերի հավաքագրման ուղղությամբ:

Ավագանու անդամներ

1. Ավագյան Ս.
2. Կարախանյան Ա.
3. Միանոյան Վ.
4. Օհանյան Վ.

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Գ. ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

N 10 29.09.2012թ.

ա/ Մոնթե Մելքոնյանի բարեգործական հասարակական կազմակերպության հետ 11 փող. թիվ 1 հասցեում 03-072-0024-0008 ծածկագրի տակ գտնվող 1.0 հա. Պետական սեփականություն հանդիսացող և 13 փող. թիվ 31 հասցեում, 03-072-0033-0002 ծածկագրի տակ գտնվող 1.32 հա. Համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման նշանակության հողամասերի անհատույց/անժամկետ օգտագործման պայմանագրերը՝ կնքված 6.10.2011 թվականին, լուծելու մասին:

բ / Նոր Կյուրին համայնքի, 03-072-0024-0008 ծածկագրի տակ գտնվող 1.0 հա. պետական սեփականություն և 13 փող. թիվ 31 հասցեում, 03-072-0033-0002 ծածկագրի տակ գտնվող 1.32 հա. համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման նշանակության հողամասերը « Մոնթե Մելքոնյան թանգարան » հիմնադրամին անհատույց / անժամկետ տրամադրելու մասին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 10 հունիսի 2011թ. թիվ 794 – Ն և 23 օգոստոսի 2012թ. թիվ 1072- Ն որոշման և ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի համապատասխան դրույթներով, հիմք ընդունելով Մոնթե Մելքոնյանե ԲՀԿ-ի 04 ապրիլի թիվ ա/ն հայտը և «Մոնթե Մելքոնյան թանգարան » հիմնադրամի 25.մայիսի 2012 թվականի թիվ 7 հայտը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

ա/ Լուծել՝ Մոնթե Մելքոնյանի բարեգործական հասարակական կազմակերպության հետ, Նոր Կյուրին համայնքի 11 փող. թիվ 1 հասցեում, 03-072-0024-0008 ծածկագրի տակ գտնվող 1.0 հա. պետական սեփականություն հանդիսացող և 13 փող. թիվ 31 հասցեում, 03-072-0033-0002 ծածկագրի տակ գտնվող 1.32 հա. համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման նշանակության հողամասերի անհատույց/անժամկետ օգտագործման վերաբերյալ, 6 հոկտեմբերի 2011 թվականին կնքված պայմանագրերը:

բ/ Նոր Կյուրին համայնքի 11 փող. թիվ 1 հասցեում, 03-072-0024-0008 ծածկագրի տակ գտնվող 1.0 հա. Պետական սեփականություն հանդիսացող և 13 փող. թիվ 31 հասցեում, 03-072-0033-0002 ծածկագրի տակ գտնվող 1.32 հա. համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման նշանակության հողամասերը անհատույց / անժամկետ տրամադրել « Մոնթե Մելքոնյան թանգարան » հիմնադրամին :

գ / . Խնդրել Նոր Կյուրին համայնքի ղեկավարին կայացնելու 6.10.2011 թվականին Համայնքի ղեկավար Գ. Օհանյանի և « Մոնթե Մելքոնյան » բարեսիրական հասարակական կազմակերպության նախագահ Ս. Մելքոնյանի կողմից լիազորված անձ Հ. Կարապետյանի միջև կնքված պայմանագրերը լուծելու մասին համապատասխան որոշում:

դ/ Առաջարկել համայնքի ղեկավար Գ. Օհանյանին « Մոնթե Մելքոնյան թանգարան» հիմնադրամի հետ կնքել հողամասերի անհատույց / անժամկետ տրամադրման մասին նոր պայմանագիր :

Ավագանու անդամներ

1. Ավագյան Ս.
2. Կարախանյան Ա
3. Սիմոնյան Վ.
4. Օհանյան Գ.

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Գ. ՕՀԱՆՅԱՆ